ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. №994

## ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Արցախյան 44-օրյա պատերազմում և Ադրբեջանի Հանրապետության կողմից 2022 թվականի սեպտեմբերի 13-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով զոհվածների հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով ծաղիկներ, խունկ և ածուխ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 153 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. № 995

## 06-040-0031-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,09980 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՆՈՔ ՍԱՆԱՍԱՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ 06-040-0031-0005 կադաստրային ծածկագրով 0,09980 հեկտար մակերեսով հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1990 թվականին կառուցված բնակելի տունը և բաց պատշգամբը 1995 թվականին կառուցված բնակելի տունը և պարսիպը կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրության հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06040QRFCBQE) և Ենոք Սանասարի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Բագրատ Սասունիկի Այվազյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ենոք Սանասարի Հովհաննիսյանի (ծնված՝ 01.01.1961թ.), Լեռնանցք բնակավայրում գտնվող 06-040-0031-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,09980 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի, դրա վրա գտնվող 97,68 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 15,61 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 13,37 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 101,18 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 12,42 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 4,65 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 24,78 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի, 0,68 քառակուսի մետր մակերեսով պարսպի, 3,05 քառակուսի մետր մակերեսով պարսպի և 0,54 քառակուսի մետր մակերեսով պարսպի նկատմամբ:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի ճշգրտված հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ, գյուղ Լեռնանցք, 10-րդ փողոց, 1-ին նրբանցք, 6 բնակելի տուն» հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ՝ Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27

ք.Սպիտակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022 թվականի N 996

### «ՍՊԻՏԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի 7-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2022 թվականի դեկտեմբերի 28-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով հանձնաժողովի քարտուղար նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Թումանյանին:

3. Աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանին՝ ապահովել սույն որոշման մասին մրցութային հանձնաժողովի անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 996 որոշման

# ԿԱԶՄ
# «ՍՊԻՏԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| հ/հ | անունը, ազգանունը | հաստատությունը (մարմինը) | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Վարդան Հովհաննիսյան | ՀՀ Լոռու մարզպետարան | ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍԳ համակարգման բաժնի պետ |
| 2 | Ռուբեն Մխիթարյան | ՀՀ Լոռու մարզպետարան | ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասնագետ |
| 3 | Էռնեստ Խաչատրյան | Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ | Սպիտակ համայնքի ղեկավարի խորհրդական |
| 4 | Ջալիկո Համբարյան | Սպիտակ համայնքի ավագանի | Սպիտակ համայնքի ավագանու անդամ |
| 5 | Գոհար Գասպարյան | «Սպիտակի Ան. Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | «Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրեն |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

*12/27/2022, 2:25:22 PM*
*«ՄՊԻՏԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ*

## Հանձնաժողովի Կազմը

ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Պաշտոնը*՝ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԳՄՏՍԳ ՀԱ ՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՌՈՒԲԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

*Պաշտոնը*՝ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒ ԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

ՉԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

*Պաշտոնը*՝ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ԷՌՆԵՍՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Պաշտոնը*՝ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Պաշտոնը*՝ՓՈԽՏՆՕՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. № 997

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0490-0101, 06-006-0490-0041 ԵՎ 06-006-0490-0100 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,00246 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն, որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0490-0101, 06-006-0490-0041 և 06-006-0490-0100 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից առանձնացված 0,00246 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2021 թվականին ինքնակամ կառուցված 21,71 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի

առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022KSU3W3 և Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06006J7WPYVA)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0490-0101, 06-006-0490-0041 և 06-006-0490-0100 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից առանձնացված 0,00246 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 21,71 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2. Հաստատել Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0490-0101, 06-006-0490-0041 և 06-006-0490-0100 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից առանձնացված 0,00246 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինության հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք. Սպիտակ, Ս.Շահումյան փողոց, 242 ավտոտնակ» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել Կարապետ Հովհաննեսի Մազմանյանին (ծնված՝ 23.01.1965թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. № 998

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0045-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,088 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0045-0001 կադաստրային ծածկագրով 0,088 հեկտար մակերեսով հողամասի 1/2 մասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 3268) փոխանցվել է Համլետ Վոլոդյայի Բադիկյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06095M9FMHUE) և Համլետ Վոլոդյայի Բադիկյանի (ծնված՝ 27.10.1967թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0045-0001 կադաստրային ծածկագրով 0,088 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ գյուղ Ջրաշեն, 1-ին փողոց, 38 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. № 999

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ 06-006-0188-0144 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,06 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 1176061 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից տրված ԱՏ-27122022-06-0404 տեղեկանքը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006CFFTNHX) և Հայկ Հովիկի Հովհաննիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայկ Հովիկի Հովհաննիսյանի (ծնված՝ 24.08.1966թ.) սեփականության իրավունքով պատկանող՝ 06-006-0188-0144 կադաստրային ծածկագրով 0,06 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 260,4 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «ք. Սպիտակ, Ուզբեկական Կ-9 թաղամաս, 47 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1805):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. № 1000

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-087-0117-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04992 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 14122022-06-0063 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060872G4NFTB) և «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Լիպարիտ Աշոտի Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0117-0020 կադաստրային ծածկագրով 0,04992 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 284,7 քառակուսի մետր մակերեսով հիդրոէլեկտրակայանին տրամադրել «Սպիտակ գյուղ Շիրակամուտ, Հայկական փողոց, 33 ՀԷԿ(հիդրոէլեկտրակայան)» հասցեն (փոստային դասիչը՝ 1820):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի «27»
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. № 1001

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0012-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,013 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1955163 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006JJEKVDJ) և Գևորգ Լևոնի Գաբրիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Լևոնի Գաբրիելյանին (ծնված՝ 16.11.1978թ.) սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0012-0001 կադաստրային ծածկագրով 0,013 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ Սպիտակ ք., Ս.Ավետիսյան փողոց, 9-րդ նրբանցք, 1 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի «27»
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2022թ. № 1002

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0229-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1,898 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 2316205 վկայականը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006FRVM55C) և «ՎԱՆԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Վանուհի Վանիկի Ասատրյանի (ծնված՝ 21.05.1983թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող «ՎԱՆԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ 06-006-0229-0007 կադաստրային ծածկագրով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության 1,898 հեկտար մակերեսով արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել «ք. Սպիտակ, Վանաձորի խճուղի, 15 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):
3. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 27 » դեկտեմբերի 2022թ. № 1003

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման 8-րդ կետով, հաշվի առնելով, որ համայնքի աղբահանումն իրականացնելու համար 2022 թվականի մայիսի 4-ին կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/8-1 և ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/8-2 պայմանագրերը ֆինանսավորելու համար գումարը չի բավականացնում՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Շրջակա միջավայրի պաշտպանություն (Աղբահանում)» գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածով նախատեսված միջոցներից 292 925 ՀՀ դրամ տեղափոխել նույն գործառական դասակարգման «Կոմունալ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4213 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի 2022թ. №1004

# ՌՈԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՍՄԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Հենրիկ Իգիթխանյանի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 21-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունները՝ Ռոբերտ Հովհաննեսի Ասմարյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Ռոբերտ Հովհաննեսի Ասմարյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2023 թվականի հունվարի 4-ին, ժամը 15:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Ռոբերտ Հովհաննեսի Ասմարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք. Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի 2022թ. № 1005

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺԱՄԱՆՑԻ ՍՐԱՀԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԽԱՓԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Լեռնավան բնակավայրի վարչական ղեկավար Նելսոն Բեգլարյանի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Արթուր Միքայելյանի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի, դեկտեմբերի 22-ի, դեկտեմբերի 23-ի զեկուցագրերը, Լեռնավան բնակավայրում գտնվող ժամանցի սրահի էլեկտրական հոսանքի հաղորդալարերի վերանորոգման, Սպիտակ քաղաքի գիշերային լուսավորության նոր համակարգի անխափան շահագործման համար ապրանքներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Փողոցների լուսավորում» գործառական դասակարգման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածից հատկացնել 156 960 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Սպիտակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի 2022թ. № 1006

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԴԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Արթուր Միքայելյանի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի, դեկտեմբերի 28-ի զեկուցագրերը, Լուսաղբյուր բնակավայրի գիշերային լուսավորության համակարգի վերանորոգման, Ամանորի կապակցությամբ Սպիտակ քաղաքի զարդարման համար ապրանքներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակույթային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածից հատկացնել 38 635,5 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«29» դեկտեմբերի 2022թ. № 1007

## «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի դեկտեմբերի 28-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66968863) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. 45/2» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (հիմնական շինություն՝ 153 քառակուսի մետր մակերես) ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի 1-ին եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 29
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«29» դեկտեմբերի 2022թ. № 1008

## «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի դեկտեմբերի 28-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66968863) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. 45/2» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (հիմնական շինություն՝ 153 քառակուսի մետր մակերես) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ 2023 թվականի 1-ին եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 29
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«29» դեկտեմբերի 2022թ. № 1009

## ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին ընդառաջ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների համար հյուրասիրություն կազմակերպելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 90 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 29 » դեկտեմբերի 2022թ. № 1010

## ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԸ ՎԿԱՅԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի 1672-Ա/2 հրամանով, հիմք ընդունելով Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից 25.11.2022թ տրված N 438 եզրակացությունը և «Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վկայագրել «Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տարատարիք խմբի սան՝ Էլեն Լավրենտի Նալբանդյանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը:

2. Աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երտասարդության և տուրիզմի բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 29 » դեկտեմբերի 2022թ. №1011

## ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԸ ՎԿԱՅԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի 1672-Ա/2 հրամանով, հիմք ընդունելով Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից 24.11.2022թ տրված N 437 եզրակացությունը և «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վկայագրել «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ավագ 2-րդ խմբի սան Արմեն Համբարձումի Հակոբյանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը:

2. Աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երտասարդության և տուրիզմի բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 29
ք.Սպիտակ